ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Վահան Բաղալյան, «Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ տնօրեն

2. Գործուղման վայրը և ժամկետները

Չեխիա, մայիսի 25-29, 2026թ.

Հունգարիա, մայիսի 31-ից հունիսի 8, 2026թ.

3. Հրավիրող կողմը

Չեխիա՝ Չեխիայի Հանրապետության Մշակույթի նախարարության Չեխիայի մշակութային ինստիտուտ

Հունգարիա՝ «Բալտազար» թատրոն, Եվրոպական միության «Ստեղծարար Եվրոպա» ծրագրի շրջանակում

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Չեխիա. Hi PergormanCZ Visitor's Programme May 2026 թատերական միջոցառման շրջնակում դիտել միջազգային թատերախմբերի կողմից ներկայացված բեմադրություններ, ստեղծել կապեր, խորացնել կապերը Չեխիայի գործընկերների հետ՝ ոչ միայն թատերական, այլ նաև արվեստի այլ ուղղություններում:

Հունգարիա. «Ստեղծարար Եվրոպա» ծրագրի շրջանակում մայիսի 31-ից հունիսի 8-ը կայացավ իմ և Գեղագիտության ազգային կենտրոնի «Փոքր թատրոն» ներառական թատերախմբի արտիստների ստեղծագործական այցը Բուդապեշտ, Հունգարիա, որտեղ հունգարացի բեմադրիչի ղեկավարությամբ ստեղծվեց ներառական ներկայացում՝ հայ, հունգարացի և լեհ արտիստների մասնակցությամբ:

5. Քննարկված թեմաները

Չեխիա. թատերական ոլորտի զարգացման միտումները տարբեր երկրներում, մասնավորապես՝ եվրոպական երկրներում, հնարավոր համագործակցությունները, փոխանակման ծրագրերը:

Հունգարիա. հունգարացի ռեժիսորի կողմից բեմադրվող ներկայացման ամենօրյա փորձեր և քննարկումներ՝ ուղղված ներառական թատրոնի ոլորտի զարգացմանն ու մշակութային երկխոսությանը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Չեխիա. առաջարկել եմ միջազգային թատերախմբերին մասնակցել Հայաստանում անցկացվող թատերական փառատոներին, ինչի մասին խոսել եմ նաև Հայաստանում գործող թատերական փառատոների ներկայացուցիչների հետ:

Հունգարիա. քննարկվել են ներառական կրթության, մասնավորապես թատերական կրթության հիմնահարցերը Հայաստանում, Հունգրահայում և Լեհաստանում, դրանց հնարավոր լուծումները և շահագրգիռ անձանց կողմից արվող գործողությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Չեխիա. պայմանավորվածություններ է ձեռք բերվել խորացնել հայ-չեխական մշակութային համագործակցությունը, մասնավորապես ԳԱԿ մշակութային նախագծերում Չեխիայի ներգրավմամբ:

Հունգարիա. նախագծի շարունակականության քննարկում, այդ թվում՝ ներկայացման բեմադրություն Լեհաստանի Լուբլին քաղաքում՝ լեհ ռեժիսորի կողմից, և Հայաստանում ներկայացման բեմադրություն՝ իմ կողմից:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Չեխիա. իմ կողմից առաջարկ է եղել ընդգրկել չեխ արվեստագետների ԳԱԿ մշակութային նախագծերում, ինչի հետ կապված հետագայում կլինեն առցանց քննարկումներ և հանդիպումներ նաև ՀՀ-ում Չեխիայի դեսպանի հետ:

Հունգարիա. նախագիծը շարունակվելու է մինչև 2027թ. մայիս ամիսը, պատասխանատուները նախագծի 3 գործընկեր կառույցներն են Հայաստանից, Հունգարիայից և Լեհաստանից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

15.06.26թ.